

Ս. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ*)

43.

20 Մայիսի 1875. Богородскъ,
Кузнецкій Мостъ, дача Раенко.

Մեծապատիւ բարեկամ

Մելքոն Փանեան,

Երեկեան գիշերը գրեթէ բոլորովին անքուն անցուցանելով և միանգամայն ջաղջախուած միւս օրը տուն հասանելով, կարօտ ես քանի մի օր հանգստութեան վասն կազդուրելոյ առողջութիւնս, ուրեմն ցաւելով ստիպուած եմ ազդ առնել մեծապատիւ բարեկամիդ, որ կարող չեմ մասնակից լինել Ձեր խորհրդածութեանն¹⁾։ Ձեր բարեկամական յանդիմանութիւնն շատ հիմնաւոր է, բայց և իմ քնքշամտութիւնն այնպիսի խնդիրների մէջ, ուր պիտոյ էր ինձ որչափ և իցէ ծանրութիւն լինել իմ ազնիւ բարեկամներիս, քաջայայտ է Ձեզ, և այս էր պատճառը իմ ոչ թէ տարակուսանքի, այլ լոկ ծանօթութեան, արդեօք կարո՞ղ էի զՁեզ անհանգիստ առնել գիշերական հիւրընկալութեան խնդրով։

Որչափ առ Ձեր հասարակաց խորհրդածութիւնը այն ընկերական արծաթի գործադրութեան մասին, որոյ վասն այս բոպէիս խնդիր է, հարկաւոր եմ համարում այս սակաւատող նամակովս գեկուցանել Ձեզ, որ ես իմ կարծիքս ստորադրում եմ հասարակաց կարծիքին, և ձայնակից եմ այն վճռին, որ պատուելի խորհրդականքը հասարակաց հաւանութեամբ դնելոց են։ Լսում եմ, թէ այդ արծաթի ժողովման միջոցին սահմանադրութիւն է եղած, որ զկնի հոգալոյ խաչատուր Լազարեանի մարմարիոնեայ կիսարձանը, մնացած արծաթի գումարը պիտի գործադրուի մի որդեգիր պահելու Լազարեանի անուամբ և ողուակի Լազարեանց ձեմարանում. ուրեմն խնդիրը այս բոպէիս կարող է միայն լինել, հոգ տանել այդ արծաթի պահպանութեանը և շահեցողութեանը ձեմարանի գանձարանի մէջ, որպէս զի աճելով ժամանակաւ, բաւականանար մի Լազարեան որդեգիր պահպանելոյ։ Ես հաւանական եմ համարում մի այսպիսի կարգադրութիւն, գոնեայ համաձայն սահմանադրութեան իմաստին։ Եթէ չկայ մի այսպիսի սահմանադրութիւն, այնուհետեւ այդ Լազարեան որդեգիրը կարո՞ղ էր իմ կարծիքով լինել

*) Տես «Արարատ» յունուար, էր. 79։

1) Յաւերժացնելու Խաչատուր Լազարեանի յիշատակը։ Յ. Տ. Յ.

և Հայկական Ճեմարանումը էջմիածնի կամ թէ въ Императорскомъ Техническомъ Институтѣ въ Москвѣ, որոյ հասարակօգուտ գիտութիւնքը կարող էին շատ պիտանի լինել Հայ մանուկին:

Սիրալից ողջունով և առ ի սրտէ յարգանքով

Ձեր

Ս. Նազարեանց.

44.

Ս. Պետերբուրգ, 5 Յունիսի 1876.

Гагаринская улица, д. № 34,

д. Черняева.

Իմ ազնիւ և շատ սիրելի բարեկամ

Մելքոն Փանեան,

Որովհետեւ պարապ ժամանակ ունիմ գրելու Ձեզ քանի մի խօսք, ապա և ծուլանալ կամիմ ոչ, մանաւանդ որ այդ բարոյական ցաւից, Աստուծոյ շնորհովը ազատ եմ ես և աշխատում եմ ազատ պահել իմ անձը: Միայն պիտի ասեմ Ձեզ, որ արդարեւ եղանակի ջերմութիւնը և Պետերբուրգում անտանալի է և ջլատիչ միանգամայն, Ոչ ուտելու, ոչ խմելու ախորժակ, ոչ քնի հանգիստ: Այս ինչ ամառ է. միայն Պետերբուրգի փողոցների պատուականութիւնը այն է, որ փողի չկայ, որովհետեւ անդադար ոտքումեն ջրով, կամ կարճ ասեմ, ջրումեն ճանապարհները, պրակեօտկաները անպիտան, բոլորը կանգուն րէսօրների վերայ, շատ սակաւք պառկած րէսօրների. և այս պատճառով անագին ցնցողութիւնք և տանջանք ձիւտրի համար: Ձեզ յայանի, որ այս տեղ փողոցներում կանգնած կան և փառաւոր կառքեր (кареты и каляски) բայց ով է դորա վարձողը և ուր պիտի գնաս այդպիսի թանգ էկիպաժներով:

Այսօր կենեալ Արամելիքին սեղանակից էի պատուաւոր հրաւերքով. այն տեղ էր և սենատոր Դելանեանը. Շնորհակալ եմ, ինձ շատ մեծարումեն և վարվումեն ինձ հետ ամենեւին ընտանեբար, որպէս և ես նոցա հետ, առանց ամենայն կեղծաւորութեան, բարեկամական ազատութեամբ, բայց և, որպէս արժան էր, պահպանելով ամենայն վայելչական պատշաճ:

Ճաշից շատ յառաջ, այսինքն իմ յատուկ գործով ըստ պայմանեալ ժամադրութեան գնացած էի այսօր իսկ կենեալի մօտ, որ և սենատոր Դելանեանին հանդիպեմ. հանդիպեցայ սորան և դարձեալ վեր գնացի կենեալի մօտ. մի ցիգար ուղեցի և սկսայ զրուցել նորա հետ. խօսքը եկաւ Ձեր վերայ. ես, զորս դու պատուի-

բեցեր սկսայ թափել նորա առաջն բոլոր սիրտս, պատմել ու նկարագրել Ձեր անձնագործ աշխատութիւնքը, որոց ականատես եմ եղած, Ձեր այժմեան հողաբարձութիւնը գերեզմանատան եկեղեցւոյ բարեկարգութեան, արևի և փոշու մէջ, առաւօտուն մի կտոր հաց և քանի մի ուտելիք քո հետ վեր առած և մինչև 10—11 երեկոյի այն տեղ աշխատելով, հազիւ թէ 12-ին դէպ ի տուն վերադառնալով։ Ուրեմն, ապացի, և նա համաձայնեցաւ ինձ—այլ ևս ինչպէս կը լինի արդիւնագործութիւնը, եթէ մի մարդ իւր անձնական օգուտը և հանգիստը մոռանալով ծառայումէ հասարակաց գործին։ Կենսագի սիրտը շատ շարժուեցաւ, որովհետև ազդու և ճարտար կերպով գործ էր դրած խօսքս. նա անձարացած, յաղթուած, մեղքը ձգեց Սիվերսի վզին, այդքան ճշմարիտ է, չգիտեմ. Աստուած գիտէ, բայց Կենսագը այս բոպէին երևեցաւ ինձ անկեղծ, որովհետև ամենևին ձայնակից էր իմ կարծիքին։ Եւ գալոց երկու շաբաթի օրը նորա հետն եմ, իսկ երեք շաբաթի օրը շոգենաւով կուղևորվեմ դէպ ի Ստօքօլմ, որովհետև իմ խընդրած, դէպ ի Լիւբէք գնացող շոգենաւեր շատ պիտի անագանին (ուշանան)։ Մի շատ անյաջող միջոց ժամանակի, գարշելի կորուստ ժամանակի. ճշմարիտ տակաւին ծանօթ մարդերի մէջ եմ, բայց թէ ինչպէս կը լինի, երբ որ յանկարծ օտար մարդերի և աշխարհների մէջ ընկնեմ, մանաւանդ մեր այժմեան անսէր, գոնեայ շատ սակաւասէր ժամանակում. ուր մի մարդ իւր անձնական շահերի մէջ թաղուած, մի բոպէ ևս պարապ չունի, որ նայէ իւր ընկերի վերայ և օգնէ նորան։ Լաւ է զոնեայ, որ մարդ լեզու գիտէ և կարող է իւր ցաւերը յայտնել, ձայն տալ, հարցանել և փոքր ի շատէ յառաջ տանել իւր գործը։

Էգուց կ'երթամ ժամ. ժամագրութիւն կայ իմ և ֆիլիպպոս Վարդանեանի մէջ. որ այդ կիւրակէ օրը Եգեանի հետ միասին գնանք Յարսիօէ սելօ և սեղանակից լինենք Վարլամ Բուդղանիչին։ Երևի ևս Պաւլովսկ էի. պատուական տեղ է. բայց բոլորը, կամ թէ մեծ մասը գեղեցիկ արուեստական չէնքեր են. մի ահագին անտառի պէս այգի, ամենադալար կանաչութեամբ և գեղեցիկ ճանապարհներով դար ի վեր ու դար ի վայր, թէպէտ կակուղ ել և էջքով։ Այդ տեղ բնակում է Կոնստանդին Նիկոլայեւիչը իւր փաբրիկ ապարանքի մէջ. մի լճակ ևս կայ։

Երևի գնացած էի նոյնպէս տեսութիւն մեր Եփրեմ վարդապետին. փափա է դարձած. երբ որ խօսումէ, ասես թէ ատամնացաւով տանջուած էր. բայց կարծեմ ատամները գնացած են. Շատ ուրախացաւ, տեսանելով ինձ. մի ժամից աւելի անոյշ ու քաղցր զրոյց տուեցինք. հրաւիրեց, որ երթամ մօտը, հիւրասիրութիւն վայելիլու, բայց չկարծեմ, թէ ժամանակ ունենամ։

Մի զարմանալի ուսմանտիկական անցք պատմեմ Դեզ. այս Չերեքաղիկ երիտասարդը, որոյ օթեանում ես իջեանաւ եմ, հիւրանոց պահող մարդ չէ. այլ մի բարեկամ, դիպուածով ճանապարհին գտած, տեսած, միմեանց հետ խօսած, միմեանց սիրած, և ինձ իւր տունը հրաւիրած մին եղաւ։ Սա է այն երեւելի Սիրիբեական հայրենասէր Չերեքաղիկ որդին, որ 2 միլիոն ռուբլի ժողոված է Օմսկ քաղաքում ունիվերսիտէտ բանալու համար։ Մի զարմանալի բարեսիրտ և քաղցրահոգի երիտասարդ, որ իւր պատուական սենեակները թողել է իմ իշխանութեանը, ինքը շատ սակաւ տանն է լինում. բայց որ իւր մաքուր անկողինը ինձ է տուել և ինքն պառկում քնումէ մի հասարակ դիւանի վերայ, այդ ես համարում եմ մի մեծ սիրարժանութիւն, որին կարող էր լնդունակ լինել մի ազնուասիրտ պատանի. այդպէս արած եմ և ես իմ կեանքում, միայն թէ մի գիշեր. բայց այդ երիտասարդը ամենայն գիշեր, բայց տնում հացկերութեան պատրաստութիւն չունի, չայից և փոքր ի շատէ առովի երեկոյեան ուտելիքից աւելի բան չկայ։ Սպասաւորին հրամայած է, որ բերէ ինձ. ինչ կամենամ. այսինքն ցամաք ուտելիք։ Մի զարմանալի մանուկ երիտասարդ, առաւօտուն թէյ պիտի ըմպենք, ես խմումեմ աւելի վաղ. նորա թէյն կը բերէ ծառան և կը դնէ նորա սեղանի վերայ. բայց այդ Չերեքաղիկը կը թողու թէյն առանց ձեռնամուխ լինելու և կերթայ տանից. տուն կը գառնայ առաւօտու 2 կամ 3 ժամին, կընկնի գիւղանի վերայ և կը քնէ։ Տեսած ես այսպիսի մարդ. ինդրեմ ողջունել մերայինքը, այլ և յառկապէս մեր պատուելի Շտհազիզը, որ մոռացաւ ինձ, դուրս գնալու օրին. ես պատրաստած էի նորան 26 ման, որ հատուցանեմ պարտքս, բայց չբեկեցաւ։

Ամենին և բոլորովին Չեր

Ս. Նազարեանց.

45.

Կոպենհագեն մայրաքաղաք Դանեմարքիայի

(Копенгагенъ)

17—29 Յունիսի 1876.

Իմ Ազնիւ Սիրելի.

Իմ առաջին նամակը Պետերբուրգից անշուշտ ստացած կը լինիս. երկրորդը ստանումես ահա Կոպենհագենից, ուր ամսուս 14-ին ժամանեցի (տեղ հասայ). ուղևորուելով Շվեդիայի մայրաքաղաք Ստոքհոլմի վերայով։

Նոր աշխարհներ, նոր լեզուներ, նոր մարդիկ, նոր բարք ու

վարք և կեցութիւն. ամենը օտար և այլապեսակ քան թէ իմ մինչև (այժմ—որ սխալմամբ բաց է թողնւած. Յ. Տ. Յ.) տեսածը և լսածը. մինչև այս տեղ. սկսեալ Պետերբուրգից, Շուեդերէն և Դանիարէն խօսող ժողովուրդ, որ ամենին անհասկանալի ինձ, թէ պէտ էրկուքն ևս գերմանական նախնի արմատից ածանցուելով (բղխելով), այնպիսի այլափոխութիւնք և այլանշակութիւնք են ստացած, որ զբնթէ ժողովրդի հետ միասին դարձած են առանձին լեզուք. բայց ինչ որ մտածող մարդուն շատ ցաւելի է, այդ զանազան ցեղերը միևնոյն գերմանական ազգի, ամեն միւր իւր առանձին բարբառը այլապէս կերպարանելով զանազան քաղաքական ազդեցութիւնների ներքոյ, և սիրտերը միանգամայն ճեղքուած ու պատառուած են միմեանցից, միակ գերդաստանի զաւակներ միմեանց թշնամի և ատեցող դառնալով. աւելի մօտ օտարին քան թէ իւր արեւակցին. Ահա թէ ինչ խորին խորհուրդունի մի ազգի ցեղերի և նոցա բարբառների բաժան բաժան լինելը միմեանցից և ամենին օտարանալը մինը միւսից. Լեզուից հետո չէ և սիրտը, հեռաւորութիւնը մի թիզ է. Մեք կարող ենք հազար փառք տալ Աստուծուն, որ մեր հայկական լեզուի զանազան բարբառները այսպիսի չար հետևանք յառաջացուցած չեն մեր համար. եթէ նախնականցի Հայի բարբառը, եթէ Աբուլխանցի մարդու խօսքը բազում մասամբք հեռացած են ընդհանուր լեզուից—մանաւանդ առաջինը իւր ամենախոշոր այլանշակութեամբք, որ հայկական լեզուի շնորհք թողած են լեզուի մէջ—այնու ամենայնիւ այդ զանազան ցեղերը մնում են միմեանց միշտ եղբայրակիցք և կըբայրասէրք. Գուցէ և մեր մէջ այդ առանձնութիւնքը, եթէ քաղաքական կեանքի բաժան բաժան որպիսութեան մէջ ստացած լինէին հաստատուն ձև և կերպարանք, յառաջացնէին և մեր մէջ այն տխուր բաժանութիւնը հոգիների և սրտերի:

Մինչև այս տեղ ես օտար պանդխտութեան մէջ եմ և անմխիթար, որովհետև ժողովրդի լեզուն անհասկանալի է ինձ. արդարև իմ բնակութեան Հոտել դ'Անգլէտեր (Հիւրանոց Անգլիայի) ասած պանդուկի մէջ կառավարիչքը և ծառայքը խօսում են փոքր ի շատէ գերմաներէն—ոմանք զոցանից և բուն գերմանացիք են—բայց ինչ ոգուտ, մարդուս կարօտութիւնը վերջանում չէ ուտելու և խմելու պիտոյքը լցուցանելով միայն սպասաւորքը մի հիւրանոցի մէջ, մեր ընկերակիցք չեն. մեզ հարկաւոր է մի հարազատ չքակալ հասարակութիւն. Եւ այսպէս, ես ոչ մի ժամանակ այնքան մօտ և մերձաւոր եղած չեմ հոգով մերայիններին, որչափ իմ հեռանալովս նոցանից. Ամենայն բոպէ սիրտս ու հոգիս լցուած է Չեզանով, իմ սիրելիներովս Մոսկովայի մէջ, և այս է իմ միակ մխիթարութիւնը. իմ հիւրանոցը չորս յարկանի մի փառաւոր

ահագին շինուած, առաջին կարգի հիւրանոց, գտնուում է քաղաքի միջնաժայռում (որ ասում է «Թագաւորի նոր հրապարակ») դորա մէջ տեղում մի բոլորակ փոքրիկ վանդակապատ ծառաստան և մարգագետին ծաղիկներով զարդարած, և միջնաժայռում հինգերորդ Քրիստեան թագաւորի ձիաւոր արձանը, կապարից (արձնից) ծուլած)։

Այս հրապարակի վերայ գտնուում են և թատրոնը, զինարանը, ճարտարութիւնների ակադեմիան և զինուորականների ուսումնարանը և այլն։ Այս հրապարակից իբրեւ իւրեանց միջնակէտից շառաւիղների պէս դէպ ի ամենայն կողմ տարածվում են երկար ու ձիգ փողոցներ հազարաւոր խանութներով. ուր փողոցները վերջանում են — յանկարծ բացվում են նոր հրապարակներ, որ տալիս է քաղաքին մի գեղեցիկ արձակութիւն։ Տուներ բոտ մեծի մասին չորս և հինգ յարկանի. փողոցները չեն այնպէս արձակ, որպէս Պետերբուրգում, բայց յստակ և մաքուր. սալայաատկը տափակ գրանիտեան քարերով յօրինած. խոտորնակ փողոցները (переулки) գարշելի նեղ այս տեղ ու այլ տեղ, ուր սալ ման գալ կարող չէ։ Շատ տեղեր տեսած եմ, և քաղաքից ևս դուրս ամբարանոցներում եղած. զբօսանք շատ ու շատ, ուր երթում են և գալիս են ամեն տեսակ սալեր, ձիւնթաց երկաթուղեւորութիւնք. եկիպաժները բոլորը կալեասկաներ 4 տեղանի միալուծ և երկուծ. ամառան միջոցին մեծ շարժողութիւն և կեանք բոլոր քաղաքի մէջ։ Ծառաստանք քաղաքի մէջ անթիւ. և տնհամար, մանաւանդ ծովի թևերի ափերում։

Ես մտածում եմ տակաւին քանի մի օր մնալ կոպենհագենում, քանի մի արժանի տեսութեան տեղեր տեսանելու համար, այնպէս որ 20-ին ամսուս կարող էի ուղևորուիլ չոգենաւով ուղղակի դէպ ի Շտետին, ուր կարող էիք Դուք ուղարկել Ձեր նամակը և տեղեկութիւնքը, գրելով հասցէի վերայ նախ և ասաջ Stetin (Preknsén) յետոյ իմ անունս ոռւսերէն. ներքեում Poste restante (որ կամի ասել, թէ նամակը պիտի մնայ նամակատան մէջ, մինչև ևս խնդրեմ թէ ևս չլինէի Շտետինում, այնու ամենայնիւ կը ստանամ նամակը. որովհետեւ ես ամեն քաղաքի նամակատան մէջ պատուէր եմ տալիս, որ իմ հասցէով եկած նամակը ուղարկեն այս ու այն քաղաքը, ուր ես երթալ կամէի. այսպիսի կարգ պահպանելով, ոչինչ նամակ կարող չէ կորչիլ, զոր օրինակ ես իմ ամուսնու նամակը, որ ուղղեցուցած էր դէպի Ստոքհօլմ, ստացայ կոպենհագենումս։

Խնդրեմ մի մատնաչափ թղթով ծանուցանել ինձ նախ և

4) Պահում ենք հեղինակի ուղղապրութիւնը, կէտադրութիւնը եւ միւս գրական-լեզուական առանձնայատկութիւնները։ Յ. Տ. Յակ.

յառաջ Ձեր որպիսութիւնը, ապա մերայինների և մերձաւոր բարեկամների դրութիւնը. Մոսկուայի նոր լուրերը:

Խնդրեմ նոյնպէս ողջունել մեր սիրելի բարեկամքը Մոսկովայում, Բաբանասեանի գերդաստանը, Ստեփանեանի ընտանիքը, Տէր Յակոբ աւագերիցու տունը:

Եւ յիշոք Ասատուոյ առնղջ եմ, և աղօթումեմ Ձեր վերայ, որ առողջ լինիք նոյնպէս: Եւստով եմ շուտով ստանալ Ձեզանից նամակ հանդերձ մխիթարական ծանօթութեամբք:

Հոգով և մտքով համբուրելով և գրկախառնուելով Ձեզ, մնամ

Ձեր եղբայրական բարեկամութեան մշտապէս կարօտ

Ս. Նապարեւանց.

Եթէ Շահազիզին նամակ գրես, ողջունիր ինձանից:

46.

Միւնխէն մայրաքաղաք Բավարիայի.

Мюнхенъ въ Баваріи.

1 Յուլիսի 1876 թ.

Եթէ չեմ սխալվում, այս երրորդ նամակն է, որ գրում եմ Ձեզ օտար աշխարհից, իմ պանդխտութեան միջից, իմ ճանապարհի վերայից, ուր հասարակ բանջարների մէջ, մի մի պատահած են ինձ նաև անուշահոտ հոգեպարար ծաղիկներ, վարդեր ու շուշաններ բարեկամութեան և սիրոյ, որ ոչ փոքր սովոր են մխիթարել օտարականի սիրտը և զարգարել նորա կեանքը: Իմ բոլոր տեսած հիւսիսային քաղաքների մէջ, զոր օրինակ Ստոքհոլմ, Հելսինգֆօրս, Աբօ, Կոպենհագեն, վերջինս միայն ուր Դանիացիք են, ցոյց տուեց ինձ մի շատ ընտանի հիւրասիրութիւն իւր օրհնած աղ ու հացով. սորա դիրքը արդարև չէ այնքան գեղեցիկ, որպէս Ստոքհոլմի դիրքը ծովի ափում, որոյ բազուկները ամենայն տեղ մէջ մտնելով ցամաքի մէջ կազմումեն կիսակղզիներ ծառաստանով ու կանաչով պատած, ուր ժողովուրդը ամենայն երեկոյ և առաւօտ ժողոված խմումէ իւր դահուէն, իւր զարեջուրը, իւր պունշը գելցերեան ջրի պէս մի ըմպելիքով, և զինուորական մուզիկան ածում է իւր զանազան խաղերը:

Ստոքհոլմը ունի աղաւթ հրապարակներ շատ, մէջ տեղում կառուցած յիշատակարաններով, Շուեդիայի թագաւորների արձաններով, որ շատ գեղեցկացնում են քաղաքը. բայց փողոցները շատ նեղ են, ամենալայնը 14 քայլափոխ. սալայատակը պատուական, տափակատաշ քարերից, տրօտուարները գորշագոյն (сѣрый) գրանիտից, այսինքն օրձաքարից: Շուեդիք սովորաբար կակուղ և

հեղ մարդիկ են, պատրաստ և յօժար օգնելու օտարականին որչափ կարող են. շատ սակաւք նոցա մէջ խօսուում են գերմաներէն և այդ պատճառով ես չկարողացայ գտանել դոցա հետ այն մօտաւորութիւնը, որ կարելի է միայն լիզուի հաղորդութեամբ. բայց առ հասարակ բարեմիտ ժողովուրդ են, միայն թէ ի ժամու և ի տարածամու խմում են իւրեանց պոնշը, ուտում են ապխտած մսեղէն շատ, չոր հաց կոտրատելով ատամներով, սուպ չունին և եթէ ունին մի այդպիսի բան, մի անհամ ուտելիք է: Ձկնեղէն շատ ունին և պատուական, որովհետեւ ծովը դրան առաջին է: Քաղաքի շրջակայքում եղած գրօսարանքը գեղեցիկ և կարգաւոր են, ծառաստանք արուեստաւոր կերպով ձգած, բայց անտառիկները ըստ մեծի մասին քարածայրերի վերայ, ցուցանում են միայն աղքատին աճելութիւն: Յստակութիւնը քաղաքի շատ մեծ է, փոշի (թոզ) ամենեւին չկայ. սայլի մէջ լծած ձիանքի թրիքը իսկոյն մաքրում են, և առաւօտ ու երեկոյ ամենայն հրապարակում տասնաւոր ու քսանաւոր մարդիկ աւելում են ու աւելում են և ջրում են փողովակներով: 1) Տունները սովորաբար բարձր, չորս և շատերը հինգ յարկանի, որ տալիս է փողոցներին շատ նեղ կերպարանք:

Արքունի նամակատունը ամենայն ժամանակ բաց, և մարդիկ նստած այն տեղ, պատրաստ են ամենայն քաղաքավարութեամբ պատասխանել քո հարցմանը, հոգալ քո տուած պատուէրքը. մի զարմանալի բարեկարգութիւն: Այս մասին աւելի գերազանց է Դանիայի մայրաքաղաքը, Կոպենհագենը, որ դրած է Ձունդ ասած ծովափողոցի վերայ. ունի աւելի լայն, նոյնպէս յստակ փողոցներ, ծառազարդ հրապարակներ շատրուաններով և թագաւորների արձաններով: Քաղաքի շրջակայքը ունին նոյնպէս գեղեցիկ ձիգ ու արձակ անտառազարդ գրօսարաններ մեծ աւազաններով. դաշտերը շատ լաւ մշակած, առանց վարուցանքի հող չկայ, և այս պատճառով Զելանդ կղզին, որոյ վերայ դրած է Կոպենհագենը շատ պտղաբեր է: Ժողովուրդը շատ քաղաքավար. փոքր ի շատէ կրթեալ մարդուց, այն շինականից անգամ հարց մի հարկաւոր բան. նա չէ ասելու, ինչպէս ուսւր Я не знаю, այլ կը դադարի, կը խօսի, կը մեկնէ քեզ ամեն ինչդրած բանդ, այն կերթայ քո հետ սայլապանի մօտ և դանիարէն կասէ նորան այս պարոնը տար այս տեղ կամ այն տեղ: Եւ սովորաբար միալուծ սայլերը չորսնստանի կալեասկաներ են մաքուր կազմուածքով:

Վարձում ես մի սայլապան և ասում ես նորան փողոցը և տան համարը. նա տանում է, դադարեցնում է քեզ տան առաջից ցած է գալիս իւր տեղից, բացում է սայլի դուռը, իջուցանում է

1) Անշուշտ, խօղովակ քառի սկզբնական ժեսն է սա. В. С. Յակ.

քեզ քաղաքավարութեամբ և դու վճարում ես նորա վարձը 40 կոպ. (մի քրոն)։ Երեկոյի 10 ժամից յետոյ սայլապանի վարձը կրկնապատկւում է, 80 կոպ. Լաւ մարդիկ են Դանիացիք, փոքր ինչ գերմանատեաց, որովհետեւ Գերմանացիք վրէժխնդիր լինելով Դանիական հին անիրաւութեանը, շատ հողեր խլած են Դանիայից և դորանով թուլացած է Դանիան, բայց կրթեալ և ուսեալ Վարդիկ շատ զգուշութեամբ և մեղմարար միայն սովոր են յայտնել իւրեանց սրտի վերայ դրած խոցը։

Բերլին մեծ և փառաւոր քաղաք է, բայց ըստ մեծի մասին ցամաք և աւազուտ. Ունտեր Լինդեն ասած փողոցը մի ահագին արձակութեամբ փողոց է ծառերով զարդարած, բայց այդ ծառերը ոչինչ ստուեր տալիս չեն, որովհետեւ համեմատութեամբ մեծարձակ փողոցին մերկ ծառեր են երևում։ Այդ հրապարակի վերայ կառուցած են թագաւորական փառաւոր ապարաններ, և դոցա առաջիկան շատ կանաչութիւնք, խոտաշատ դաշտեր, որ առաւօտից մինչև երեկոյ ճրում են ու ճրում են։ Մի գեղեցիկ տեսարան է այս դալարի նախադաշտների կանաչազարդութիւնը ծառերով և դանազան պատատուկ բուսականներով, ամենը շատ ախորժեշի և ճաշակաւոր կերպով յօրինուած. այսպիսի կարգեր չկան Պետերբուրգում, յետոյ փառաւոր տրոտուարները ասես թէ մի լիզած իստակ դաշտ են։ Բայց բուն Բերլինացիք, որչափ և մտախոհ անձինք լինէին, սիրելի ժողովուրդ չեն, սառն և պազ, անհիւրասէր, անձնապաշտ։

Բերլինի մէջ կան մի տեսակ աւազակ մարդիկ, որ փողոցի մէջ հանդիպելով և խօսք բանալով մարդու հետ, կը տանեն չորջեղնելու, յետոյ կը մտուցանեն մի ծակամուտ դարեջուր խմելու համար, և խնչ ես մտածում. այդ դարեջրատներում (որ ի հարկէ բաց փողոցների վերայ չեն) նստած են թղթախաղաց մարդիկ, բայց լոկ երեւի կարտով, որ մի զումար բազութեան պէս մի բան է. այդ երեք կարտերը, որոց 2 սի տասնանոց խաչեր ունին, իսկ միւսը թագաւոր կամ թագուհի 2 կարմիր կուպրատով. դորանց խառնումեն և ձգում են այս տեղ ու այնտեղ. ապա մարջ են բռնում 5 ման, 10 ման, 100 ման. թէ որ տեղ էր ընկած թագուհին, ինձ ես կամեցած էր իմ անպիտան ընկերը, որ բերեց այս տեղ, փտանգի մէջ ձգել. բայց ես հասկացայ բանի դորութիւնը, վեր կացայ և հեռացայ։

Լէյպցիխ էի, և կացայ այն տեղ 5 օր. մեծ վաճառական քաղաք է, ուր կան քանի մի արձակ ու փառաւոր հրապարակներ, դոցա մէջ առաւել փառաւորը և գեղեցիկը է Աւգուստեան ասած հրապարակը, ուր գտանվում են թէ երևելի հիւրանոցքը, թէ արքունական շինուածքը, թէ ատրոն, մուգէոն, նամակատուն, ունիվեր-

սիւսեաւ. և ամեն տեղ կանաչ ծառաստանք, ծաղիկ ու վարդեր, որ անկամ լինելով հրապարակում. ոչ ոք մօտենում չէ գոցաւառեա թէ երեսայք այս տեղ գիտեն արժան ու պատշաճը. եղայ մի անգամ քաղաքից դուրս վարդագորգ հովիւս առած զրօսարանումը որ մի անտառ է, ըստ մեծի մասին կաղնի ծառերով, բայց վարդ չկայ այդ տեղ. այդ անտառի զանազան միջոյներում կամ աեղերում չինած են դահուկտունք և բուժեատներ գաւիթներում, ի սեղաններով և աթոռներով այդ տեղ հաւաքվում է ժողովուրդը և զուարճանում է, Բօղենթալում կար կոնցերտ. լուսաւորութիւնը 12000 գոյն գոյն լապտերներով. ջրացայտ շատրուաններ, որ լուսաւորում էին քանի մի բողէ նոյնպէս գոյն գոյն ելերտրական լուսով. և գործում էին բաւական գեղեցիկ տեսարան. կամարակապ դարպասներ և արուեստական քարանձաւներ, բոլորը գեղեցիկ կերպով լուսաւորած: Բայց այս Բօղենթալի այդու մէջ է ժողովուրդը ուտում խմում է և նստած է առաջնակողմում. թէ ատրոնական բեմի առաջն. որ չինած է զրօսարանի առաջակողմնան և յետնակողմնան զրօսարանների մէջ տեղում:

Լէյպցիխի տունները արտաքուստ կեղտոտ կերպարանք ունին, որովհետեւ գործատուների ծխային շողիները ամենայն բան սեւացնում են. բայց հրապարակի վերայ դրած արքունի շինուածները շատ մաքուր Լէյպցիխի տետեխիքի հրապարակները շատ առատ են և ծաղիկներով, գեղեցիկ վարդերով ու զմբախներով (շուշաններով):

Սյժմ Միւնխենումն և մ. պայծառ քաղաք, արձակ փողոցներով, նեղերը ևս կան. այս տեղից չուտով կերթամ Թարասպ (Շվեյցարիա), ուր պիտի գործ ամում ջրեր. բայց դու քո նամակները կարող ես ուղղել դէպ ի Միւնխեն, գրելով վերան poste restante.

Կը ողջունես իմ ամուսինը, իմ երեսայքը, պ. Բարանասովենց. չմոռանաս ասել իմ կնոջը, որ ես զարմացած ու անմխիթար եմ, որ նորանից, սկսեալ յունիսի 8-ից մինչև այժմ նամակ չունիմ. այդ ինչ օտարոտի բան է: Ինչ է պատահել:

Զեք Նազարեանց.

Եթէ արծաթ հարկաւոր լինի, տելեգրամ կուղարկեմ Զեք, որ արծաթ ուղարկէ ինձ փոխանակագրով որ և իցէ բանկերի վերայ Միւնխենում, կամ թէ Թարասպում (Tarasp in Graubünden (Schweiz):

47.

Тараспъ въ Граубюнденѣ (Швейцарія)

4—5 յուլիսի 1876 թուականի.

16—17 (նոր ոճով)

Իմ ազնիւ բարեկամ

Մեկըն ֆանեանց.

Ամսուս 15-ին, այսինքն երեկ 8 ժամուն զկնի ճաշուն ողջ և առողջ հասայ Տարասպ և իջեանեցայ փոստա անուն հիւրանոցում, որ ասվում է այդպէս, որովհետեւ նամակատունը այդ շինութեան մէջ է։ Այսօր սկսայ բժշկի պատուէրով գործ ածել հանքային ջուր, որ պիտի ներգործէ ընդդէմ իմ ցաւին. առաջին անգամ խմեցի 2 մեծ բաժակ 10—15 միջոց բուլէների մէջ, լաւ ման գալուց յետոյ, ջուրը ազային ամխաթթու համ ունի, սառն է և ոչ անախորժ. այն աղբիւրը, որ գետնի տակից եռ գալով և գազեր արձակելով վեր է վազում, ասվում է Լուցիոսի աղբիւր. այս աղբիւրից հրամայած է ինձ խմել, մի մի բաժակ յաւելացնելով օրը, այնպէս որ թիւր կարող է հասնել 4—5 բաժակի. նայելով ջրի ներգործութեանը իմ ցաւի վերայ, բժիշկը Քիլիաս անուն, կառնէ իւր տնօրէնութիւնը։

Այս Տարասպ տեղը մի փոքր քաղաք է 12,000 բնակիչներով, որ բաժանվում է երկու մասն, վերին տարասպ և ստորին տարասպ. երկուքի մէջ տեղում գտանվում են երկու հոյակապ հիւրանոցք, որոց մինը ասվում է Հօտել Բելվիզերէ և միւսը Հօտել-Նամակատուն Բաց ի սօրանից նոյն իսկ հանքային ջրերի շինուածը ունի իւր առանձին առաւել հոյակապ հիւրանոցը, ուր առաւել թանգ են թէ կերակուրը և թէ օթեանը. ևս վճարում եմ իմ հիւրանոցիս հացկերութեանս (նախաճաշի և երեկոյեան հացի հետ միասին), այլ և սպասաւորութեանը 7 ֆրանկ (=2 մանէթի) օրը. Այլ և, որովհետեւ մեր հիւրանոցը 2/3 վերստ հեռի է հանքային ջրերից, ստանում եմ և էկրպած գնալու և գալու կարելի չէ ասել, որ թանգ է, այլ մանաւանդ շատ արժան համեմատելով Գերմանիայի մայրաքաղաքի հիւրանոցներին, ուր կատարելապէս կաշի են քերթում. Միւնխենում (Բաւարիայի մայրաքաղաքում մի օր մէջ 5 մանէթ կեղեքեցին ինձանից. միւս տեղերում թէ և թանգ ր. գորա փոխարէն տեսած եմ և օրինաւոր սպասաւորութիւն և այլ օգուտներ։

Շվեյցարիայի աշխարհը մի գեղեցիկ աշխարհ է, ունի շատ նմանութիւն կովկասեան սարերի հետ, միայն թէ ուղ սարերի հովիտները անմարդաբնակ անշէն անապատներ են. մինչ այս տեղ ամեն տեղ ժողովուրդ, ամեն տեղ վարուցանք, ուր ներում է հղը,

ամեն տեղ սարերի կուրծքին գիւղ և քաղաք: Մեր Կովկասի սարերը ուղիղ, սքաժ պատերի պէս դէպ ի ցած իջանելով, արդարեւ ահագին և սարսափելի ստուարութեամբ ու երկայնութեամբ ձգվում են ու տարածվում են անծայր ու անվերջ գոտիների պէս. բայց դռբա, ասեւ թէ, անդլուխ մարմիններ էին, բայ ի Կազրէք և Էլբորուս սարակատարներից. բայց այս տեղ սարազօտիները կամաց կամաց, երբեմն և կոշտ կերպով դէպ ի վեր ցցուելով կազմում են մի տեսակ ալիքանման կոհակաձև շղթայաշարք, կամ մի ծայրով կամ թէ երկու, երեք, չորս և աւելի ծայրերով և դոցա մէջ տեղում թամբերի պէս խորութիւնք:

Այդ սարերի գլուխը միշտ պսակած են ձիւնով. և դոցա հովիտներում, որոց միջից անցանք մեք. նստած է մի սաժեն հաստութեամբ ձիւն, որ եթէ իսկոյն հալուէր արեգակի ճառագայթներից, ջրհեղեղ պիտի գործէր. բայց ով, հալվումէ կամաց կամաց և գոյացնում է լեռնավտակներ, որ ամենայն կողմից կարկաշատահանքի պէս, արծաթափայլ փրփուրով դէպ ի ցած են վիժում սարերի ահագին բարձրութիւնից. և ոչ մի տեղից, այլ հարիւրաւոր և հազարաւոր տեղից, յիւրաւի և Կովկասում հազուադէպ չեն այսպիսի տեսարաններ. բայց այս տեղ բնութիւնը աւելի հոյակապ է և մարդիկ ևս բնութեան կատաղի բնութիւնը սանձի և սահմանի տակ են դրած, լաւ եզերական թումբերով շրջապատելով այդպէս գոյացած սաստիկ սրբնթաց գետերը: Եւ ամեն տեղ լաւ ճանապարհներ ոչ թէ միայն ճանապարհորդների համար սարերի վերայով, ինչպէս Կովկասում. այլ և քաղաքի բնակիչների համար իւրեանց դրացի սարերի վերայով:

Իմ օթեանի պատուհանների առաջն արեւածաղին բացվում է մի աննման տեսարան վերեւում ձիւնապսակ լեռնակատարներ, սարերի ոտքում զուարթ, կանաչուն ծառեր և թուփեր, սոցանից աւելի դէպ ի խոնարհ դալարի դաշտեր ու արօտներ. յետոյ մի հովիտ որոյ միջով տնտրալով, խոխոջելով և գոռալով վազում է գետը. սորա միւս կողմում, աւելի ստորին եզերքում դրած է մի գիւղը այս տեղ ու այն տեղ շաղ տուած փոքրիկ սիրուն չինական տուներով, առանց փողոցների, ասեւ թէ մինը միւսի մէջ կոխած ու խցկած: Այդ տեղ կայ և մի փոքրիկ եկեղեցի դանդաղատնով և ժամացույցով. այս գիւղի վերայ, որ ասվում է ստորին Տարասպ, թաղաւորում են երկու սիրուն հիւրանոցք, մինը Բելվկոյեր անուն, իսկ միւսը Հիւրանոց-փոսա, ուր ևս բնակում եմ:

Արդարեւ, Շվէյցարիա գեղեցիկ աշխարհ է, սար ու ձոր և դորա վերայ ու մէջ պարարտ արօտներ, որ անուցանում են տաւար ու խաչինք. հրաշալի կաթն ու իւղ. հացն ևս վատ չէ, աւելի լաւ թխած և համեղ քան թէ Գերմանիայում. ջուրը, ջուրը Շվէյցա-

րիայի—ուր հազարաւոր ականակիտ աղբիւրներ զած են վիժում սարերի գագաթից և ձերպերից—մի զարմանալի խտակ, պարզ, դալար և համեղ ջուր է. մինչ Գերմանիայում խմելու ջուր չկայ, բոլորը տաք և թառամած ջուրեր, գոնեայ այն քաղաքներում, ուր ես կեցած եմ:

Ինչ կայ մեր մայրիկ Մոսկվայում. հեռանալով Չեզանից, չհեռացանք սրտերով. աչքի տակից դուրս, սրտից դուրս առածը կարծեմ որ չունի ոչինչ հաղորդութիւն մեր հետ. այնուամենայնիւ ես տեղիք ունիմ գանդատելու Չեք լուսթեան վերայ. դու գուցէ չատ հեշտ կարդարանաս իմ առաջն, եթէ մի զարմանալի, բոլորովին օտարօտի բան պատմեմ Չեզ. իմ ամուսնից սկսեալ անցեալ յունիսի 8-ից մինչև այս օրս, որ հին է յուլիսի, ոչինչ նամակ չունիմ. և թէ որպիսի պատճառ կար այդպիսի ահաւոր լուսթեան, գուշակել կարող չեմ, որովհետեւ կին ու այր մարդու, երկու ամուսնակիցների մէջ պիտի միշտ լինի հաղորդութիւն թէ քաղցր և թէ դառն անցքերի մէջ. որպէս ուրախութեանը, նոյնպէս և տրամուլթեանը պիտի մեզ մասնակից լինել. եւ ծածկելով ինչ պիտի յառաջանայ: Ես մեծ զարմացքի և չուարման մէջ եմ, որ իմ ամուսինը ստանալով ինձանից նամակ նամակի վերայ, բոլորը լի, զեղուն, թաթաղուն սիրոյ և քնքշութեան արտերով, այն ծագիկներով զարգարուն, այնու ամենայնիւ բարձի թողի է արել իւր ամուսինը— իմ պէս ամուսինը: Եւ իմ բոլոր նամակների մէջ գրած եմ նորան, թէ նւր պիտոյ էր նորան ուղղել իւր թուղթը, ամենայն նոր քաղաք եկած, իսկոյն զիմած եմ գէպ ի նամակատունը հարցանելու, արդեօք նամակ կայ Մոսկվայից իմ հասցևով. իւրաքանչիւր քաղաքից դուրս գալով. իսկապատուէրներ եմ տուած նամակատան պաշտօնեաներին, որ եթէ իմ անունովս նամակ ստացուի այդ տեղ, իսկոյն ուղարկեն այս ինչ և այն ինչ քաղաք, poste restante. իմ բոլոր հարց ու խնդիրներին բոլոր նամակատաներում պատասխանած են ա՛յ, նամակ ստացուած չէ: Իմ ամուսնու երկրորդ նամակը Ստաք-հօլմից հասած է ինձ միայն կոպենհագենում. սորանով վերջացած է բոլոր հաղորդակցութիւնը մեր մէջ. Չգիտեմ, ինչ մտածեմ, որովհետեւ այս տեղ վերջանում է իմ բոլոր մտածողական կարողութիւնս ինչ է պատահել, ասացի վերեւում, որ ոչինչ կարող չէր պատահած լինել, որին տեղեկանալու իրաւունք չունէի ես, իբրեւ ամուսին և հայր իմ գերդաստանի:

Երեկ գրեցի 10-րդ նամակը իմ ամուսնին. այսօր գրում եմ Չեզ երրորդ կամ չորրորդ նամակը. որովհետեւ ես կը մնամ Տարասպում 3—4 շաբաթ, ուրիմն ինքնին յայտնի է Չեզ, թէ ուր պիտի ուղղէիք Չեք թուղթերը:

Այս ամսիս, 25-ին, երբ ստացուած էր իմ սոճիկը, 100 ման.

(հարիւրանոց) կուղարկէք ինձ. այսպէս գրած եմ և իմ ամուսնուն, իմ նամակներս թէ առ իմ ամուսինս և թէ առ Ձեզ, պիտի հասած լինին թէ Ձեզ և թէ նորան, որովհետև հասցէրը գրած էին ամենայն ճշտութեամբ, ամենայն յայտնութեամբ:

Ողջունելով Ձեզ և մեր Մոսկովեան բարեկամքը բոլորով սրբտիւ, խնդրում եմ Ձեզանից շուտով գրել ինձ նամակիս պատասխանը և փարատել իմ մտատանջութիւնքը:

Ահա իմ հասցէն.

Schuls—Tarasp in Graubünden (Schweiz)

Ձեր

Ս. Նազարեանց.

48.

Շուլս—Տարասպ Գաւաթինդըն գաւառում Շվեյցարիայի Հիւրանոց նամակատան.

Schuls—Tarasp in Graubünden, Schweiz Hôtel de la Poste.

6 օգոստոսի (նոր ոճով) 1876

25 յուլիսի (հին ոճով)

Ազնիւ բարեկամ և եղբայր

Մելքոն Գասպարեան.

Վերջ ի վերջոյ լսում եմ Քեզանից մի ձայն կենդանութեան, ստա՛նալով իմ հինգ նամակիս փոխարէն մի հատ պատասխան. որ պիտի զանցառութիւն, չեմ ասում մոռացութիւն, որովհետև այդ անկարելի էր. ես գիտէի և գիտեմ այժմ ևս, որ Դու շատ զբաղուած մարդ ես, ուրբու՜մ ես չինել, նորոգել, բարեկարգել ամենայն բան, որ Քո իշխանութեան ներքոյ է. այդ, փառք ու պարծանք է Քեզ իբրև գործունեայ երեսփոխանի, արժանի ամենայն խոստովանութեան և յարգութեան մեր Հայերի կողմից—բայց անբաններից Դու երախտագիտութիւն մի պահանջիր—, բայց առանց դատնապարտութեան պարտ եմ ասել Քեզ, որ այնու ամենայնիւ հարկաւոր չէ անփոյթ առնել իւր բարեկամքը, թէ մօտաւորքը և թէ հեռաւորքը, մանաւանդ այն բարեկամը, որ արդէն 26 տարու քնքուշ բարեկամական կապերով կապուած է քո հետ Դու, արդարև, իբրև խոհական մարդ պիտի հասկանաս, որ իմ պահանջողութիւնը սիրոյ պահանջողութիւն է, բարեկամութեան իրաւունք է և ոչ թէ բռնադատութիւն:

Նամակիցդ երևում է նոյնպէս, որ փոքր ինչ թուլացած ես, փոխանակ յառաջ խաղալու, ասես թէ դէպ ի յետ ես երթում. ինչո՛ւ այդպէս. այո՛, այո՛, մեզ ծերերիս հարկաւոր էր ձայն տալ

երիտասարդներին. մեզ պարտ էր մեղմել և ձեզ աճել. բայց, իմ ազնիւ բարեկամ, քաջալերուիք, զօրացիք, իմացիք. որ մեք տակաւին այնպիսի դառամած, թուլացած մարդիկ չենք, որ չկարողանայինք կեանքի պարտականութիւնքը լցուցանել. ոչ, մեր տարիքը հանգարտ մտախոհութեան և իմաստութեան տարիք են. մեք աւելի երջանիկ, աւելի վայելչութեամբ հարուստ մարդիկ ենք, քան թէ երիտասարդները. մեր արիւնը երակների մէջ վառուած եփուած չէ, թնդ չեփուի. բայց և պաշտ կարծրացած չէ, այլ հոսում է, շարժւում է փոքր ինչ դանդաղ, բայց բարեխառն և կանոնաւոր կերպով:

Ասացի, Դու գործունեայ երեսփոխան ես, ուրեմն և իրեք բարեկամ կարող ես քո գործունէութեան քանի մի ժամերը նուիրել քո բարեկամներին, մանաւանդ քո հեռաւոր բարեկամին, որին քաղցր էր երբեմն լսել քո ձայնը իրրի ձայն աւետաւոր հեռատանից: Դու ամենեւին արդարացած ես իմ աչքում, որովհետեւ խոսելովանում ես քո զանցառութիւնը և խնդրելով խնդրում ես իմ ներողամտութիւնս. ուրիշ մարդիկ, մեր Ասիացիք այդպիսի դիպումներում հազար ու մին պատճառներ սովոր են յառաջ բերել, իւրեանց անձը անպարտ կացուցանելու համար: Անպիտան սովորութիւն, ապացոյց պղտորամտութեան և անպարզութեան:

Շատ ուրախացայ լսելով քո չինութիւնների և բարեկարգութիւնների յաջողութիւնը և աւարտը գրեթէ բոլորովին. խնդրեմ ընդունել իմ առ ի սրտէ շնորհակալութիւնները քո անձանձիր հոգաբարձութեան մասին, մեր աղգային եկեղեցիների համար Մոսկուայում: Երբ որ Ատուռով կարժանանամ Ձեր տեսութեանը, ի հարկէ Դու աշխատութիւն յանձն կանուցուցուցանել ինձ քո բոլոր ազգասիրական հոյակապ վաստակները: Ի՞նչ դրութեան մէջ են մեր հանգուցեալ սիրելիների գերեզմանները: Շնորհակալ եմ Բեզ Նոյնպէս, որ հոգաբարձութիւն ես արել յուղարկելու րոյեալը Օլգային, և ուրախացայ մեծապէս լսելով որ այնպէս լաւ նորոգած էր, մինչև չզանազանել ամենեւին նորից: Բայց և լաւ արծաթ (110 ման.) վճարած ենք նորոգող Շալիինգին:

Հաւան չեմ, որ մինչև այժմ միանգամ ես գնացած չեմ Բողոքօշոյնկ այցելութիւն գործելու մեր ընտանիքին. իմ ամուսինս գանդատաւոր է և իրաւացի, որ մեր Հայերը անփոյթ են արած նորան: Բայց մեր պատուական բարեկամ Շահաղիլը Նոյնպէս անհոգ է գտանուած այդ մասին. խնդրեմ ողջունել նորան և ասել ինձանից, որ ես մինչև այժմ նամակ գրած կը լինէի նորան, եթէ իմացած լինէի, որ նա Մոսկուայումն է. ես միշտ կարձել եմ, որ նա Ղրիմումն էր, որովհետեւ կամեցած էր ճանապարհորդել դէպ ի այն կողմերը: Խնդրեմ ողջունել իմ կողմից մեր սիրելի Բաբանասեանի

ընտանիքը, նոյնպէս Սուրինեան աւագ քահանայն և նորա ընտանիքը, ես մտադիր եմ պատահել Վիւրցքերդ, և կը որոնեմ նորա որդին, որ ուսանում է այն տեղւոյ Յաւում եմ, որ ոչ Բաբանասեանը և ոչ Սուրինեան աւագերէցը ժամանակ գտած չեն այցելութիւն առնելու մեր ընտանիքին, և ես խնդրած եմ այդ չնորհը նոցանից, Յաւելի նոյն և անհասկանալի անհոգութիւն:

Ես կը մնամ Տարասպում մինչև Օգոստոսի 10-ը նոր ոճով-ուրենմի Չեր նամակները ինձ հասանել կարող չեն, կը խնդրեմ ուղարկել Չեր նամակները Դրեզդէն (въ Дрезденъ, poste restante), միայն թէ ցանկալի էր գրել իմ հասցէն օրինաւոր, այսպէս.

Дрезденъ (въ Саксоніи)

An Herrn Stephan Nasariantz Kaiserlich russischer wirklicher Staatsruth. Poste restante.

Ես մտածում եմ, Աստուծով օգոստոսի վերջերում լինել Մոսկուայում, առաջին կայ դեռ ես երկար ճանապարհ հատանելու, ճանապարհի ծախքը մեծ չեն, բայց հիւրանոցներում բաւական մեծ, մանաւանդ երբ քսակդ լի չէ արծաթով, համեմատութեամբ Ռուսաստանի, արդարեւ արժան է այս տեղ ամենայն բան, Ուտեիքը շատ միջակային, լաւ սուպ, լաւ միս ոչինչ տեղ չտեսայ, կերակուրներ շատ ու բազմազան, բայց ոչ յագեցուցիչ, այս մասին շատ լաւ է Տարասպում, միայն թէ մեզէն կերակուրքը նոյնպէս անպիտան, փտրուկ փայտի Այո շատ քաղաքներ տեսայ և նկատեցի, մաքրութեանը, խտակութեանը, հիւրընկալութեանը և հոգաբարձութեանը Հիւրանոցներում խօսք չկայ, ամենայն ինչ կարգաւոր և զովանի և գեղեցիկ և յարմարաւոր, մանաւանդ այս փոքրիկ Շվէյցարիայում (2 միլիոն ժողովուրդ), և մարդիկը որքան պատուական, քաղաքավար, յառաջամատոյց, հաճոյակատար և օտարասէր, ճշմարիտ է և այս, որ ես ամեն տեղ սէր բերելով, սէր ես գտած եմ առատութեամբ, օտար տունների մէջ ընդունուելով իբրեւ իւրային համարուած, որ շատ քաղցր բան է պանդխտականի համար:

Ասես թէ այս Եւրոպայիք մի այլ նիւթից զանգուած (չաղախուած, չիւած) մարդիկ են քան թէ մեր տեսածները Ռուսաստանում, այս տեղ մարդերի մէջ սիրտ ու հոգի, սէր կայ, Շվէյցարիայում սովորութիւն կայ ճանապարհի վերայ ողջունել միմեանց թէ ծանօթ և թէ անծանօթ, թէ կին և թէ այր մարդ, բարի լոյս, բարի օր, բարի երեկոյ կը լսես ամեն մարդու և երեսայի բերանից ի հարկէ նոյնպիսի քաղաքավարութեամբ և դու պիտի հանդիպիս միւսներին, բայց կարող ես և զանց առնել, եթէ կամիս, Մեծ քաղաքներում տեսանելի չէ այս գեղեցիկ սովորութիւնը, բարքերի

Նրբացած խոշորութիւնը կամ խոշորացած նրբութիւնը ջնջել է նորան. միայն թէ քո կարիքը ամեն մարդ պատրաստ է լցուցանել ճանապարհի վերայ, ուշադիր լինելով քո բոլոր հարցուածներին: Այս տեղ ամենայն անկրկնում կանգնած են և վարձկան մարդիկ ուղեցոյցք և առաջնորդք դէպի ուր կամէիր երթալ. կառքերը իստակ, բոլորը կալեասկաներ, թեթեալարժ, միալուծ և երկլուծ և տաքսերով. երեկոյեան 10 ժամից յետոյ կրկնապատիկ: Հարկաւոր է քեզ որոնել մի մարդ, աստ կառապանին փողոցը և տան համարը, այնուհետև 10—15 րոպէի մէջ տեղ կը հասուցանէ քեզ. մեծ քաղաքներում այս բանս դժուարանալու էր. բայց ոչ, այդ կառապանները ունին մի զարմանալի յիշողութիւն: Գերմանական լեզուն ամեն տեղ տարածուած է. Ստոքհոլմում, Կոպենհագենում, Շվեյցարիայում, ուր ժողովրդի մի մասը գերմանական կա չէ, այլ ռոմանական և իտալական: Գերմանական և ֆրանսիական լեզուով կարելի է ամեն տեղ ճանապարհ գտանել, թէ հիւրանոցներում և թէ փողոցներում:

Տարասպի օդը շատ գեղեցիկ է. մեք բնակում ենք մի հովտի մէջ, սարերի մէջ, բայց և շատ քերամ: Հանքային ջրերի տունը մի պատածի պէս շինուած է խանութներով. լուացարանքը առանձին շինուած, բժշկատունը, որը նոյն և հիւրանոց է, ունի յետնակողմում մի գեղեցիկ ծաղկազարդ բուրաստան շատուանով, որ ջուրը դէպի վեր է ցայտում գոնեայ 4 սաժեն, և գեղեցիկ ճեմելիք. բժիշկը մի պատուական գերմանացի, Բիլիաս անուն, ներկայ է միշտ: Հանքային ջուր խմողները պիտի ման գան մի մօտաւոր անտառում ինն գետի ափում: Մեծ շարժողութիւն, անդադար անց ու դարձ կանանց և տղամարդերի, մի խայտաճամուկ տեսարան:

Էմինի հրաժարումը գիմնագիտնից զարմանալի բան է. ինչ է անում մեր հպարտ, կոշտ և փքոցուսոյց Բանանեանցը, ողորմելի մարդ, անսէր մարդ, արժանի ցաւակցութեան քան թէ ատելութեան. և ինչ է մի այդպիսի կեանք, որ ոչ ոք սիրելի չէր մեզ և ոչ ում սիրելի չէինք մեք: Սարսափելի և նշդրելով քեզանից ողջունել մեր բոլոր ծանօթքը և բարեկամքը, այլ և ողջունելով և գրկախառնելով քեզ հոգով մնամ:

Քո միշտ քեզ սիրող և յարգող

Ս. Նազարեանց:

Թ. Տէր Յակովբեան

